Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան Մատենադարան»-ի 2014 թվականի գործունեության վերաբերյալ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մատենադարանն իր աշխատանքային գործընթացում որդեգրել է հիմնական ուղղություններ և, ըստ դրանց, կազմակերպել է ընթերցողների սպասարկում, համապատասխան գրականության մշտական ապահովում առձեռն ֆոնդում, նոր ստացած գրականության համեմատում, առկա գրականության մշակում և այլն:

«Վաչե և Թամար Մանուկյան» Մատենադարանի, ՀՀ ազգային գրադարանի ու Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ամբիոնի նախաձեռնությամբ, անցյալ տարում շարունակվել են Մատենադարանում առկա էլեկտրոնային քարտարանի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները: